ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՄԵԾԱՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ԿԱՏԱՐՈՂ՝ *ՄԵՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
ՂԵԿԱՎԱՐ՝ *հ.գ.թ. ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
Գլուխ 1. Ոչ լիարժեք ընտանիք.....5
ԳԼՈՒԽ 2.Ոչ լիարժեք ընտանիքի նախադպրոցական տարիքի
երեխաների դաստիարակության հիմնական խնդիրները 6
2.1. Ոչ լիարժեք ընտանիքի ազդեցությունը նախադպրոցական
տարիքի երեխաների անձի ձևավորման վրա.....6
2.2. Ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական
երեխայի դաստիարակության առանձնահատկությունները.....8
2.3.Ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական
երեխայի դաստիարակության դժվարությունների հաղթահարում 11
Փորձարարական մաս.....14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երեխաները երկրի բնական ծաղիկներն են, իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին աճեցնում են ընտանիքում՝ ծնողները»,- այդպես է արտահայտել իր միտքը Ա. Մ. Գորկին:

Երեխայի կրթադաստիարակչական, ֆիզիկական, հոգևոր, մտավոր դաստիարակության գործում մեծ և կարևոր դեր ունի ընտանիքը: Այն ինչ երեխան առաջինը տեսնում, լսում և ընդօրինակում է, իր ընտանիքի անդամների և հատկապես ծնողների առաջնային խնդիրը պետք է լինի: Մեծերի հետ դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքները, շրջապատը համատեղ աշխատում են երեխաների կրթությանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Նրանք են երեխայի առաջին ուսուցիչները: Մինչ նախադպրոցական որևէ տիպի հաստատություն հաճախելը՝ փոքրիկները շատ բան են սովորում՝ սկսած իր ձեռքով բաժակից ջուր խմելուց կամ գդալով ճաշ ուտելուց: Ընտանիքի անդամներն են երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Նրանք շատ լավ են ճանաչում իրենց երեխաներին և գործուն դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը:

Հոգեբանները տարբերում են մի քանի տիպի ընտանիքներ: Գոյություն ունեն լիարժեք ընտանիքներ, բայց դեստրուկտիվ, որտեղ չկա համաձայնություն, և տիրում են մշտական վեճեր: Ոչ լրիվ ընտանիքն առաջին հերթին այն է, որտեղ գոյություն ունեն դաստիարակության դեֆեկտներ, չնայած սա այս տիպի ընտանիքի միակ բնութագիրը չէ:

Ոչ լրիվ ընտանիքում չկա ավանդական հայր-մայր-երեխա հարաբերությունները: Հիմնականում բացակայում է ծնողներից մեկը և երեխան մեծանում է մեկ ծնողի դաստիարակությամբ: Ոչ լրիվ ընտանիքը ձևավորվում է ծնողներից մեկի մահվան, ամուսնալուծության: Կան ոչ լրիվ ընտանիքների ձևավորման մի քանի աղբյուրներ,

սակայն բոլոր տեսակներում էլ առանձնահատուկ նշանակություն և կարևորություն ունի ընտանիքի երեխայի դաստիարակությունը:

Թեմայի արդիականությունը: Ընտանեկան դաստիարակությունը, ընտանեկան փոխհարաբերությունների և ընտանիքի հիմնախնդիրները ներկայումս դարձել են առավել, քան արդիական: Դա պայմանավորված է նրանով, որ մեր ժամանակներում, կապված սոցիալական, հոգեբանական և այլ խնդիրների հետ, գնալով ավելանում են ոչ լիարժեք ընտանիքների քանակը, իսկ այնտեղ մեծացող երեխան դրա համար մեղավոր չէ և պետք է ստանա լիարժեք դաստիարակություն, լիարժեք ընտանիքներում մեծացող հասակակիցների նման վայելի սեր, ջերմություն, ուշադրություն, ըմբռնում և հասարակության լիիրավ քաղաքացի մեծանա:

Աշխատանքի նպատակն է .

Ուսումնասիրել ոչ լիարժեք ընտանիքներում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության դժվարությունները և գտնել դրանց լուծման ուղիները:

Աշխատանքի խնդիրներն են.

✓ Նկարագրել ոչ լիարժեք ընտանիքներում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության դժվարությունները:

✓ Բացահայտել ոչ լիարժեք ընտանիքներում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության գործում առկա հիմնախնդիրները:

✓ Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումները, մեկնաբանությունները:

✓ Իրականացնել հետազոտություն՝ ոչ լիարժեք ընտանիքներում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության դժվարությունների հաղթահարման և դրա կարևորության վերաբերյալ, առաջարկել տարբերակներ՝ երեխայի լիարժեք դաստիարակության համար:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 2 գլուխներից, երկրորդ գլխի 3 ենթագլխից, փորձարարական մասից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔ

Ոչ լիարժեք ընտանիքը փոքր սոցիալական խումբ է, որը մասնակի թերի կապեր ունի, երբ չկա ավանդական հայր-մայր-երեխա հարաբերությունները: Միայնակ ծնող ժամանակակից ընտանիքի հիմնական սոցիալ-դեմոգրաֆիական տեսակներից մեկն է: Ոչ լրիվ ընտանիքը բաղկացած է մեկ ծնողից և նրա հետ ապրող երեխաներից: Ոչ լրիվ ընտանիքը ձևավորվում է ծնողներից մեկի մահվան, ամուսնալուծության, անօրինական երեխաների ծնունդների, ընտանեկան հարաբերությունների փլուզման հետևանքով: Կան ոչ լրիվ ընտանիքների ձևավորման մի քանի աղբյուրներ, ամենատարածվածը կապված է ամուսինների ամուսնալուծության հետ:

Ոչ լրիվ ընտանիքում երեխա ունենալն ու մեծացնելը կապված է մի շարք կենսական դժվարությունների հետ, դա կարող են հաղթահարել միայն անձնական և հոգևոր-բարոյական կայուն հատկություններ և կամք ունեցող մայրերը: Միայնակ մայրերի մեծ մասը երիտասարդ կանայք են, որոնք, որպես կանոն, չունեն կրթություն և մասնագիտություն, ոչ մի գաղափար մայրության, երեխային մեծացման հմտությունների և ունակությունների մասին: Սա էապես ազդում է և՛ կանանց վարքագծի, և՛ երեխաների նկատմամբ նրանց վերաբերմունքի ու դաստիարակության արդյունավետության վրա:

Առանձին երեխաներ, անկախ իրենցից, լինում են դաժան, կոպիտ, ցինիկ, ծույլ, երբեմն չարացած, թունոտ: Նրանց մեջ կարող են լինել վատ նախասիրություններ ու սովորույթներ: Եվ որքան էլ դժվար լինի մարդու կյանքը, նա պարտավոր է իր վրա վերցրել երեխայի հետ կապված բոլոր դժվարությունները, ուրիշ ուղի չունի, քան լինել փոքր-ինչ մանկավարժ և համբերատար: Մակարենկոն երեխայի անձի նկատմամբ հարգանքի յուրահատուկ չափանիշ է համարում նրա նկատմամբ խելացի պահանջկոտությունը: Մակարենկոն դա արտահայտել է այսպես. «որքան կարելի է՝ շատ պահանջներ երեխային, բայց դրա հետ միասին, որքան կարելի է՝ շատ հարգանք նրա նկատմամբ»: [2, 288]

ԳԼՈՒԽ 2. ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ոչ լիարժեք ընտանիքի ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների անձի ձևավորման վրա

Կան բազում ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք ազդում են երեխայի վրա և ամեն անգամ փոխում նրա ներքին աշխարհը: Քանի որ երեխայի դաստիարակությունը, առողջ ու ու հոգեբանորեն կայուն սերունդ մեծացնելը մեր կյանքում շատ կարևոր է, յուրաքանչյուր ծնող, հենվելով սեփական փորձի և գիտելիքների վրա, ցանկանում է հաշվի առնելով նաև շրջապատը՝ որքան հնարավոր է ճիշտ դաստիարակել իր երեխաներին: Ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում անհամեմատ մեծ են:

Ոչ լիարժեք ընտանիքների երեխաների մոտ հաճախ դիտվում է ինքնուրույնության և շրջապատում ինքնահաստատվելու բարձր ձգտումը: Երբ այդպիսի ընտանիքում երեխային այնքան էլ չեն սիրում ու հաշվի չեն նստում նրա հետ, նա այդ դաժան իրականությանը տարբեր ձևով է արձագանքում՝ դառնում է ինքնամփոփ, ընկնում է երազանքների և անուրջների աշխարհը, փորձում է իր վրա ուշադրություն գրավել և այլն…

Մեկ ուրիշ տարբերակ էլ կա, երբ ծնողը թույլ է տալիս գերխնամակալություն: Երեխային թույլ չեն տալիս ցուցաբերել նախաձեռնություն, ինքնուրույնություն, վճռականություն: Նման երեխաները դառնում են պասիվ: Որոշ ընտանիքներում երեխաներին դաստիարակում են չոր ու կոպիտ ձևերով, և հետագայում նրանք տառապում են տարբեր հոգեկան հիվանդություններով: Իսկ երբ դաստիարակությանը խառնվում են տատիկները, այսինքն մի տատիկն ասում է մի բան, մյուսը՝ նրան հակասող մեկ այլ բան, ծնողն էլ, իրենց հերթին, այլ պահանջներ է ներկայացնում երեխային, երեխան չիմանալով ում պետք է լսի կամ ընդունի ասածը, դառնում է կամազուրկ, բոլորին ենթակա, ու կորցնում է իր ես-ը:

Նախադպրոցական տարիքի երեխայի համար ոչ լիարժեք ընտանիքը այնքան էլ վատ առումով հասկանալի չէ: Մեկի համար ընտանիքը կարող է լինել լավ, մյուսի համար՝ վատ՝ պատճառ դառնալով ծանր հոգեկան ապրումների: Ընտանիքը կարող է լինել լիարժեք, բայց դաստիարակությունը՝ հակասող, ճնշող, խիստ պայմաններով: Երբեմն ոչ լիարժեք ընտանիքն ավելի օգտակար է երեխայի համար, քան լիարժեքը, բայց անբարենպաստ (հայրը հարբեցող է կամ նմանատիպ վիճակներ):

Երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի մասին, առաջին հերթին ցանկանում ենք պարզել, թե ինչ ընտանիքից է նա, ինչպիսի դաստիարակություն է ստացել, ովքեր են նրա ծնողները: Եթե նրա վարքը գովասանքի է արժանանում, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք, բարենպաստ ընտանիքում: Ոչ լիարժեքն իր մեջ ներառում է շփման, վերաբերմունքի ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ ախտահարված են, և այն նպաստում է անձի սխալ կայացմանը: Ոչ լիարժեք ընտանիքների ծնողների զգալի մասը չի կարողանում կազմակերպել ընտանեկան կյանքը, չգիտի ճիշտ մոտեցումներ երեխաների նկատմամբ. երբ բավարարում են երեխաների բոլոր ընդունելի և ոչ ընդունելի պահանջմունքները, չեն զգում, որ դաստիարակում են եսասեր, եսամոլ, չար, անտարբեր մարդու: Նման անբարենպաստ պայմանները ազդում են երեխայի ներհոգեկան զարգացման վաղ օնթոգենեզում: Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է նեգատիվ վերաբերմունք, ինչն էլ վկայում է նրանց միջև արդեն ստեղծվող պատնեշի մասին:

Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքները բնութագրվում են նյութական ցածր մակարդակով: Այսպիսի ընտանիքներում կարող է բացակայել ծնողներից որևէ մեկը, կամ կրթական մակարդակը շատ ցածր լինել, սակայն դա չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծացող երեխաներն ավելի շատ են ընդունակ բացասական ներգործությունների նկատմամբ: Ծնողների ներկայությունը և դերը նախադպրոցական տարիքի երեխայի կյանք շատ մեծ է: Այն երեխաները, որոնք զրկված են մեկ կամ երկու ծնողից, դանդաղ են զարգանում: Անգամ եթե երեխան ծնողներից մեկին կորցնում է վաղ տարիքում և չի հասցնում գիտակցել այդ կորուստը, դա դժվարություններ է

առաջացնում ապագայում: Մայրը բավարարում է երեխայի պահանջները: Այդ պատճառով նրա մահը կամ հեռանալն առաջացնում է ճգնաժամ շրջապատող աշխարհի հանդեպ: Որոշ հոգեբաններ գտնում են, որ հոր բացակայությունն այդքան էլ խորը չի ազդում երեխայի վրա: Սակայն նա զրկվում է տղամարդկային վարքի օրինակից, քանի որ հենց հայրն է երեխային տանում դեպի հասարակություն: Իսկ միայնակ մայրը՝ բեռնված տնտեսական խնդիրներով, ժամանակ չի ունենում զբաղվել երեխայով, նրա մոտ կորչում է հետաքրքրությունը, առաջանում է մոր և երեխայի օտարացում:

2.2. Ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական երեխայի դաստիարակության առանձահատկությունները

Ոչ լիարժեք ընտանիքում ծնողը կամ պատասխանատու անձը պետք է կարողանա իր երեխայի համար հասակակիցների հետ խաղային հանդիպումներ կազմակերպել կամ ապահովել նրա հաճախումները տարբեր խմբային պարապմունքներին: Երբեմն երեխայի մոտ չի ստացվում ընկերներ ձեռք բերել, և որ հասակակիցների հետ շփվելիս նրա մոտ դեռևս բացասական պահեր են լինում: Խնդիրն այն է, որ ծնողը այսպես ասած՝ «սայլը դնում է ձիուց առաջ»: Այսինքն՝ երեխային բավականին հնարավորություններ է տրվում մյուսների հետ շփման համար, սակայն նրան չեն սովորեցնում այն հմտությունները, որ անհրաժեշտ են այդ շփման մեջ հաջողակ լինելու համար: [5, 70-71]

Որոշ ծնողներ երբեմն մոռանում են այն մասին, որ պետք է նպաստեն երեխայի հետաքրքրասիրությանը, բավարարեն նրա պահանջմունքները: Եթե երեխային խաբում են, հետո նրան դժվար կլինի հասնել ճշմարտության: Երեխաները շուտ տպավորվում են, և մեկ անգամ լսածը կարող է երկար ժամանակ մնալ նրա հիշողության մեջ ու ազդել վարքի վրա: Եթե երեխայից ինչ-որ բան են պահում, և նա դա տեսնում է, որ շրջապատն օգտվում է դրանից, իսկ իրեն չեն տալիս, նա առաջին իսկ հարմար առիթի դեպքում ձեռք կբերի այն՝ անկախ ձեռքբերման ճանապարհներից: Հետագայում կարող

է պատժվել իր արարքի համար, բայց անհրաժեշտության դեպքում նորից կանի նույնը, սակայն այս անգամ կլինի ավելի զգույշ:

Ծնողները դաստիարակում են երեխային խոսելով կամ հրամայելով, երբեմն էլ նույնիսկ տնից բացակայելու ժամանակ: Ծնողի ձայնի հնչերանգի մեջ տեղի ունեցող ամենափոքրիկ փոփոխությունն անգամ երեխան զգում է, այնինչ ծնողը կարող է դա չնկատել: Եթե երեխան երբեմն ծնողի հետ կոպիտ է խոսում, կարելի է չկասկածել, որ, հավանաբար, նման կոպտություն նա լսել է նրանից: Հատկապես երեխայի վրա շատ է ազդում մոր վերաբերմունքը հոր նկատմամբ. եթե մայրն արհամարհանքով է վերաբերվում ամուսնու հետ, ապա, բնական է, երեխան կհետևի նրա վարքին: Տեղի է ունենում նաև հակառակը, երբ հայրը կոպիտ է վերաբերվում մոր հետ: Կռիվն ընտանիքում հոգեկան ցնցում է առաջացնում երեխայի մոտ ու խորը հետքեր թողնում: Եթե ծնողներն իսկապես սիրում են իրենց զավակին և ուզում են դաստիարակել նրան ճիշտ ձևով, պետք է ձգտեն փոխհամաձայնություն ստեղծել ընտանիքում:

Որոշ գիտնականներ գտնում են, որ նախադպրոցական տարիքից երեխայի բնավորության գծերը ձևավորող հիմնական գործոններից է սխալ դաստիարակությունը: Դաստիարակությունը լինում է արհամարհական. այն պայմանավորված է գիտակցված և չգիտակցված պահերով: Էությունն այն է, որ կիրառվում է կամ չափից դուրս պահանջկոտություն և կոպտություն, կամ անբավարար վերահսկողություն:

Երեխայի համար շատ կարևոր է նրա ընդհանուր սոցիալական վիճակը, որը ձևավորվում է նաև ընտանիքի կազմով. երկու ծնողների առկայությունը դրական ձևով է ներկայացնում երեխային իր շրջապատում, իսկ հոր բացակայությունը թուլացնում է նրա սոցիալական դիրքը: Ամուսնալուծության հետևանքն ավելի ուժեղ է ազդում տղաների վրա, քան աղջիկների: Նրանք դառնում են անկառավարելի, ագրեսիվ, ցուցաբերում են անինքնուրույնություն և տագնապ: Նրանց վարքը թե տանը և թե դրսում ավելի ինֆանտիլ բնույթ է կրում, քան լիարժեք ընտանիքներից դուրս եկած դեռահասինը: Ընտանիքի փլուզումը բացասաբար է ազդում ոչ միայն ամուսինների

հարաբերությունների, այլև իր հետքն է թողնում ծնող-երեխա հարաբերությունների վրա: Դրանք կարելի է բաժանել երկու տիպի:

Ա) Ամուսնալուծության հետ կապված՝ խախտվում է մոր հուզական հավասարակշռությունը: Նրա հոգևոր ուժը չի բավականացնում, որպեսզի դժվար պահերին օգնի երեխային: Այս իրավիճակը բարդանում է այնքանով, որ, կորցնելով հոգևոր կապը երեխայի հետ փոքր հասակում, մոր համար կա վտանգ, որ այն չի վերականգնվի դեռ երկար տարիներ:

Բ) Մոր գերխնամքն է, որը երեխայի մոտ կարող է առաջացնել ատելություն մոր նկատմամբ կամ նրա իշխանությունից ազատվելու ցանկություն: Նման մայրերը խանդով են վերաբերվում որդուն, տալիս են նրան ամբողջ սերն ու քնքշությունը, որը չէին ծախսել ամուսնու հետ:

Ոչ լիարժեք ընտանիքներում, որտեղ բացակայում է հայրը, տղաների համար տղամարդու իդեալը հիմնականում լինում է քեռին, ավագ եղբայրը:

Իրական կյանքում գրեթե անհնար է, որ տան անդամներից որևէ մեկի վատ տրամադրությունը չազդի մյուսների վրա: Հաճախ երեխան, երբ ծնողներն անտրամադիր են, լացելու, տնից փախչելու, վատ արարք գործելու ցանկություն է ունենում: Նա զգում է հոգեբանական անհարմարություն, սակայն չի գտնում պատճառը, և թե ինչպիսի միջոցներով է հնարավոր խուսափել դրանցից:

Ծնողներից երկար ժամանակ բաժանման մեջ գտնվող երեխաների մոտ կարող են առաջանալ վարքի շեղումներ, իսկ հետագայում կարող են հիմք հանդիսանալ հոգեկան խանգարումների համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ փոքր երեխաների մոտ մեծ է հավանականությունը, որ ավելի ուշ տարիքում սթրեսային իրավիճակը կարող է առաջացնել հուզական և վարքային շեղումներ: Սակայն պետք է նշել, որ վնասակար է ոչ թե բուն բաժանումը, այլ միջավայրը, մթնոլորտը, որում հայտնվում է երեխան բաժանումից հետո: Հենց սա է հոգեկան խանգարում առաջացնող գործոններից մեկը: Որոշ հետազոտողներ պնդում են, այն երեխաները, որոնք ինչ-որ

ժամանակով հայտնվել են մանկատներում, ոչ լիարժեք ընտանիքներից են և կրկին վերադառնում են նման ընտանիքներ:

Ծնողների բաժանումը կապված է երեխայի հակասոցիալական վարքի հետ, նույնիսկ եթե ընտանիքը մնում է ամբողջական: Տպավորություն է ստեղծվում, որ այդպիսի վարքը կարող է հանդիպել վատ, բայց ոչ ամուսնալուծված ընտանիքներից դուրս եկած երեխաների մոտ:[8]

2.3. Ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական երեխայի դաստիարակության դժվարությունների հաղթահարում

Ընտանիքն այն կարևոր սոցիալական ինստիտուտն է, որտեղ բավարարվում են երեխայի տարբեր պահանջմունքները, որոնց հիմնական՝ կենսաբանական պահանջմունքից հետո առանձնացվում է անվտանգության, սիրո և ապահովության պահանջմունքը:

Մանկական ագրեսիայի առաջացման պատճառ առաջին հերթին կարող է լինել ընտանիքը, երբ ծնողը կոպիտ և վատ է վերաբերվում երեխային, իսկ երեխան ծնողից անհրաժեշտ սեր ու ջերմություն չի ստանում: Դա հիմնականում լինում է ոչ լիարժեք ընտանիքներում: Ագրեսիայի դեպքում երեխայի մոտ նկատվում է անհանգստություն, անհնազանդություն, գերակտիվություն, տագնապայնության բարձր մակարդակ, ցածր ինքնագնահատական: Երեխան կարող է ագրեսիա դրսևորել որպես ուշադրություն գրավելու միջոց և սեփական հույզերն արտահայտելու անկարողության հետևանք:

Ընտանեկան մթնոլորտը, ընտանիքի ծնողներից որևէ մեկի բացակայությունը երեխայի վարքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում: Այս առումով մեծ դեր ունի նաև ընտանեկան դաստիարակության ոճը, որն իրենից ներկայացնում է ընտանիքում երեխաների հետ ծնողների շփման, նրանց վարքի վերահսկողության և կիրառվող դաստիարակության մեթոդների համակարգ:

Այս ամենը գիտակցելով և հանուն երեխայի ապագայի՝ ընտանիքում պետք է հնարավորինս դրսևորել հուզականորեն ջերմ հարաբերություններ երեխայի

նկատմամբ: Պետք է լավ հասկանալ, թե ինչպիսի պահանջներ պետք է թելադրել և ինչպիսին՝ քննարկել: Նման ընտանիքներում ֆիզիկական պատիժները և ագրեսիվությունը բացակայում են: Նման ընտանիքում մեծացող երեխաները ունենում են ադեկվատ ինքնագնահատական, սոցիալական հմտություններ:

Այն ընտանիքում, որտեղ ծնողը նախադպրոցական տարիքի երեխաների համար սահմանում է խիստ կանոններ և պահանջներ, որոնք ենթակա չեն քննարկման, երեխաները, որպես կանոն, լինում են ինքնամփոփ, երկչոտ, կաշկանդված, ունենում են հավակնությունների և ձեռքբերումների ցածր մակարդակ: Երեխայից պահանջում են մեծ նվաճումներ, անհաջողությունների դեպքում պատժում են, խստորեն վերահսկում են երեխային, ներխուժում են երեխայի անձնական տարածք, երեխայի կարծիքը հաշվի չեն առնում: Սակայն ծնողը պետք է գիտակցի, որ յուրաքանչյուր տարիքային փուլում պետք է լսել երեխայի կարծիքը և երեխայի տարիքին համապատասխան ազատություն սահմանել:[7, 106]

Նախադպրոցական տարիքի վերջում երեխայի գործունեության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է սկսում գրավել ապագա արդյունքի մտապատկերը: Սակայն այդ նվաճումը բոլոր երեխաների մոտ չի նկատվում: Նպատակասլացության, կազմակերպվածության, գործունեության կամածին բնույթի զարգացման ցածր աստիճանը բնորոշ են շատ երեխաների համար, և այդ հանգամանքը մեծ չափով դժվարացնում է նրանց դաստիարակությունն ու հետագա կյանքին պատրաստելը:[3]

Ընտանիքում և մանկապարտեզում պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում երեխան սուր կերպով զգա ինքնասպասարկման իր պարտականությունները: Օրինակ՝ մաքուր ու կոկիկ լինելու պահանջներ առաջադրելու հետ միասին պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի երեխան ստիպված լինի ինքնուրույնաբար (հասկանալի է, իր ուժերի ներածին չափով) կարգի բերել իր հագուստներն ու մնացած իրերը:{8, 106]

Եվ վերջապես, կան ոչ լիարժեք այնպիսի ընտանիքներ, որի ծնողը անտարբեր է երեխաների կարիքների, հետաքրքրությունների նկատմամբ, ինչը հետագայում կարող

է պատճառ դառնալ երեխաների մոտ տարբեր վարքային խանգարումների: Դաստիարակության հետ կապված խնդիրները առաջնահերթություն չեն ներկայացնում, քանի որ կողմնակի շատ այլ մտահոգություններ կան: Երեխան իր խնդիրների վերաբերյալ հիմնականում պետք է ինքնուրույն որոշումներ կայացնի: Դաստիարակության այս բարդ իրավիճակում երեխայի մոտ բացակայում է ծնողի հետ հուզական կապվածությունը: [6, 228-231]

Այսպիսով, պետք է նշել, որ ընտանեկան կյանքը բնութագրվում է ոչ թե ընտանիքի անդամներից որևէ մեկի անհատական բնութագրմամբ, այլ սոցիալական պայմաններով և այն միջավայրով, որում ապրում է ընտանիքը: Այս ամենից երևում է, որ ոչ լիարժեք ընտանիքի դեռահասները, ի տարբերություն լիարժեք ընտանիքների իրենց հասակակիցների, ավելի զգայուն են, անզիջող:

Փորձենք ներկայացնել այն առաջարկները, որոնք կօգնեն ոչ լիարժեք ընտանիքում դեսահասների ճիշտ դաստիարակմանը.

Ա. Ոչ լիարժեք ընտանիքներում պետք է ստեղծել պայմաններ, որպեսզի երեխան իրեն զգա սիրված և պահանջված, ընդգծվի նրա կարևորությունը:

Բ. Ծնողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի դաստիարակությանը, ավելի շատ ժամանակ տրամադրեն նրան, որպեսզի երեխայի մոտ չձևավորվի թշնամական վերաբերմունք, ագրեսիվություն հասարակության նկատմամբ:

Գ. Իսկ, ընդհանուր առմամբ, բոլոր ծնողներին և ընտանիքներին կառաջարկենք հիշել, որ երեխան գերզգայուն էակ է, որն ամեն ինչ զգում և հասկանում է: Այսինքն, երկու ծնողի առկայությունը դեռ չի նշանակում ջերմ մթնոլորտ, հոգեբանական պահանջմունքների բավարարում, որոնք չափազանց անհրաժեշտ են երեխայի ճիշտ ձևավորման և զարգացման համար:

Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերն հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում: Հոգեբան Ա.Ն.Լեոնտևը նշում է, որ «նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է

իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ»: Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ: Ընտանեկան դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորված երեխայի հետագա գոյության և կենսագործունեության ներդաշնակությունը: Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ:

Ոչ լիարժեք ընտանիքները սովորաբար դաստիարակում են «վախի» սկզբունքով և դաստիարակության նշված անընդունելի տեսակը կոչվում է «դաժան դաստիարակություն»: Դաժան դաստիարակության հիմքում ընկած է չնչին մեղավորության համար խստագույն պատժելիության սկզբունքը, որը ձևավորում է վախով պայմանավորված «օրինակելի» վարքագիծ: Երեխան սովորում է դրսևորել երկակի վարքագիծ՝ դաժանության սկզբունքով դաստիարակող մեծահասակի ներկայությամբ «օրինակելի», բացակայության պայմաններում՝ սանձարձակ: Դաժան դաստիարակության դեպքում երկատվում է երեխայի վարքագիծը, մտածելակերպը և ձևավորվում է նենգ և աշխարհին բացասաբար տրամադրված անձնավորություն:

Ոչ լրիվ ընտանիքներն ունեն բազմաթիվ դժվարություններ և խնդիրներ: Դրանք ստիպված է լուծել ծնողներից մեկը: Սակայն, սխալ է համարել, որ ոչ լրիվ ընտանիքն ինքնին ստեղծում է երեխայի դաստիարակության համար անբարեհաջող մթնոլորտ: Բազմաթիվ են ոչ լրիվ, սակայն բարենպաստ ընտանիքների օրինակները: [1, 147-154]

Յուրաքանչյուր ընտանիք պետք է յուրովի մոտենա հարցին՝ չօգտվելով պատրաստի, կողմնակի «դեղատոմսերից»: Ամենակարևորը, ինչպես նշել է, Ա. Ս. Մակարենկոն, այն է, որ ծնողները հիշեն. «Դուք երեխային դաստիարակում եք ոչ միայն այն ժամանակ, երբ զրուցում եք նրա հետ, սովորեցնում կամ հրամայում նրան: Դուք նրան դաստիարակում եք ձեր կյանքի յուրաքանչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ դուք տանը չեք» [4, 23]:

Փորձարարական մաս

Վարժանքներ և՛ մանկապարտեզում, և՛ ընտանիքում

1. Խոսենք զգացմունքներից

Երեխայի հետ խոսում ենք զգացմունքներից՝ պարզելով, թե ինչ գիտի զգացմունքների մասին: Գրանցում ենք բոլոր զգացմունքներին վերաբերվող բառերը: Համադրում ենք զգացմունքները համապատասխան նկարներով:

Երեխայի հետ քննարկում ենք, թե օրվա ընթացքում երբ է ապրում այդ զգացմունքը, ինչից առաջ և հետո, ինչ կուզենա փոխել զգացմունքի ապրման մեջ և ինչու:

2. Դրական արձագանք

Այս վարժանքն օգնում է դրականորեն ամրապնդել երեխայի վարքը:

Երեխային ուղղված բոլոր հակազդումները սկսել դրական արտահայտությամբ, օրինակ՝

- ✓ Ինձ դուր է գալիս, երբ դու……,սակայն…….
- ✓ Ինձ շատ օգնում է, երբ դու……,բայց կարելի է շտկել……..
- ✓ Մենք շատ լավ աշխատեցինք,կարծում եմ միայն մեզ պետք է……

3. Ինչպես ընկերանալ

Այս վարժանքի նպատակն է օգնել երեխային հասկանալ, թե հասակակիցների հետ ընկերանալու և ընկերությունը պահպանելու համար ինչ որակներ են պետք: Որակները համատեղ աշխատանքում դուրս բերելուց հետո, երեխան գնահատում է իր սեփական ունակությունները՝ ընկերական հարաբերությունները պահպանելու հարցում:

Վարժանքը կիրառելի է նաև խմբային աշխատանքում: Եթե դուրս բերված որակների ցանկը մեծ է, ապա քննարկման նպատակով ընտրվում են 3-5 որակ, որոնք ամենակարևորն են և ցանկալի է զարգացնել՝ հարաբերությունները բարելավելու նպատակով:

Խաղի հրավեր [3, 83]

Այս վարժանքի նպատակը շփման հմտություններ, հանդուրժողականություն, համբերատարություն սովորեցնելն է: Խաղի կանոններն են՝ չխփել, չքաշքշել, չնեղանալ:

Հարցաթերթ
« Եկեք ծանոթանանք»

ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

1. Ամբողջական անուն երեխա _____
2. Ծննդյան ամսաթիվ (օր, ամիս, տարի) _____
3. Տան հասցեն _____ հեռախոս _____
4. Բնակարանային պայմաններ՝ վարձով, հանրակացարան, սեփական բնակարան
5. Նյութական պայմաններ (նիշ)՝ լավ, բավարար, անբավարար:
6. Տեղեկություններ ծնողների մասին

ՄԱՅՐ:

ԱՆՈՒՆԸ. _____Տարիքը _____

Կրթություն _____Աշխատանքի վայրը _____

Ինչպիսի՞ օգնություն կարող եք տրամադրել:_____

ՀԱՅՐ (եթե կա):

ԱՆՈՒՆԸ. _____Տարիքը _____

Կրթություն _____Աշխատանքի վայրը _____

7. Ինչպիսի՞ օգնություն կարող եք ցուցաբերել _____

8. Որո՞նք են ձեր ընտանիքի ավանդույթները (համատեղ ճամփորդություններ, էքսկուրսիաներ, տոներ նշել, այցելել թատրոն, ցուցահանդեսներ, երեկոյան ընթերցումներ, երեխայի խնդիրների համատեղ լուծում և այլն):

_____

_____

9. Ո՞վ է ձեր ընտանիքում հիմնականում զբաղվում երեխայի դաստիարակությամբ:

_____

_____

10. Ձեր տեսակետը երեխայի դաստիարակության վերաբերյալ (որակներ, որոնք դուք կցանկանայիք զարգացնել նրա մեջ)

_____

_____

11. Ընտանիքում դաստիարակության սկզբունքները (խիստ, փափուկ, դեմոկրատական, կիրառել համոզում, կատարել երեխայի ցանկությունները, թույլ տալ անել այնպես, ինչպես ուզում է)

պատիժներ _____

խթաններ _____

12. Ի՞նչն է ձեզ ամենաշատը դուր գալիս ձեր երեխայի մեջ:

_____

_____

13. Ի՞նչն է ձեզ ամենաշատը վրդովեցնում ձեր երեխայի մեջ:

_____

_____

14. Ի՞նչ դեր եք վերապահում ընտանիքին երեխայի դաստիարակության, կրթության և զարգացման գործում:

_____

_____

15. Ի՞նչ օգնություն եք ակնկալում մանկապարտեզից:

_____

_____

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում, ուսումնասիրելով բազմաթիվ գիտական, գիտամեթոդական գրականություն ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության, դժվարությունների և դրանց հաղթահարման միջոցների վերաբերյալ, կատարելով հարցադրումներ երեխաների, նրանց ծնողների և դաստիարակների շրջանում, վերլուծելով սեփական փորձի հիման վրա ձեռք բերած իմացությունները, եկանք այն եզրահանգման, որ ոչ լիարժեք ընտանիքում մեծացող նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակությունը և դրա հետ կապված դժվարությունները շատ կարևոր և հասարակական նշանակություն ունեցող հարց է:

Ոչ լիարժեք է այն ընտանիքը, որը բաղկացած է մեկ ծնողից ՝ մեկ կամ մի քանի անչափահաս երեխաների հետ: Անկախ դրանից՝ ցավոք, երբեմն այդ ոչ կատարյալ ընտանիքը բախվում է տարբեր խնդիրների, որոշ խնդիրներ խոչընդոտում են հասարակության մեջ ընտանիքի ադապտացմանը: Մեկ ծնողն ի վիճակի չէ տնտեսապես լիարժեք ապահովել երեխային: Ընտանիքի այս տեսակը կարիք ունի ոչ միայն պետական աջակցության, այլև սոցիալ-մանկավարժական օգնության: Ոչ լիարժեք ընտանիքում պետք է գիտակցեն, որ նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության հարցը շատ կարևոր է և գտնվում է նրա կյանքի կարևոր փուլում: Հենց ընտանիքում են դրվում երեխայի բնույթն ու ինքնությունը: Հոր, մոր հանդեպ ունեցած իր հարաբերություններից երեխան յուրացնում է առաջին պարտականությունները հասարակության առջև:

Ծնողներից մեկի կորուստը նպաստում է ցավալի փորձառությունների առաջացմանը, որոնք ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա: Ոչ լիարժեք ընտանիքների մեծ տոկոսը ձևավորվում է ամուսնալուծությունների կամ մեկ ծնողի մահվան պատճառով: Նման պարագաներում ծնողներից մեկը փորձում է լրացնել մյուսի պակասը, երեխային շրջապատելով հոգատարությամբ ու քնքշությամբ:

Թե այս և թե մյուս դեպքերում ընտանիքի դաստիարակչական մթնոլորտը խիստ խեղաթյուրվում է, ինչն էլ բացասաբար է անդրադառնում երեխային:

Պարզվել է, որ որքան քիչ ջերմություն և հոգատարություն է ստանում երեխան, այնքան դանդաղ է հասունանում որպես անհատ, այնքան ավելի հակված է պասիվության և անտարբերության, և շատ հավանական է, որ հետագայում նրա մոտ կձևավորվի թույլ բնույթ:

Ծնողների համար շատ կարևոր է հասկանալ, որ անհրաժեշտ է ոչ միայն սիրել երեխային և առաջնորդվել նրա խնամքի ամենօրյա հոգսերով, նրա դաստիարակությանբ, այլև անհրաժեշտ է, որ երեխան զգա, հասկանա, վստահ լինի, որ իրեն սիրում են, լցված լինի սիրո այդ զգացողությամբ, ինչպիսի դժվարություններ, բախումներ և կոնֆլիկտներ էլ որ ծագեն ծնողների հետ իր հարաբերություններում: Միայն երեխայի նկատմամբ սիրո մեջ է նրա վստահության և հնարավոր է մարդու հոգեկան աշխարհի ճիշտ ձևավորումը, միայն սիրո հիման վրա կարող եք դաստիարակել բարոյական վարքագիծ: Ընդ որում, այս «աքսիոմը» վերաբերում է ինչպես լիարժեք, այնպես էլ ոչ լիարժեք ընտանիքին: Ընդ որում, ոչ լիարժեք ընտանիքում պարտադիր չէ, որ մեկ ծնողը ձգտի լրացնել բացակայող ծնողի սերը: Սերը «երկուսի համար» միշտ չէ, որ պտուղ է տալիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 1992, 163 էջ
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2004, 446 էջ
3. Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ (1), Մեթոդական ուղեցույց (Ձեռնարկ հոգեբանների համար) Երևան-2017, 87 էջ
4. Մանկավարժություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2008/5-64, 126 էջ
5. Մեթոդական ուղեցույց, Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ, ձեռնարկ, 80 էջ
6. Նախադպրոցական ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը համալիր և ինտեգրած պարապմունքների միջոցով, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հոդվածներ, 2020, №1, 452 էջ
7. Պետրովսկի Ալ. Վ., Տարիքային և մանկա վարժական հոգեբանություն (Թարգմնությունը՝ Ա. Նալչաջյանի), Լույս հրատարակչություն, Երևան, 1977, 399 էջ
8. https://poqrik.am/%D5%AE%D5%B6%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6/%D5%B8%D5%B9-%D5%AC%D5%AB%D5%A1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84-%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A5%D6%80/